

Թ Ի Ի 23

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՐԱԿԱԶՄՈՒԹԵՆՆԵՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԻԳ.

27 Դեկտեմբեր 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄՍՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Սլի ձառտեփ, Թի. 49

1914

ԿԵԴՐՈՆԱԿՈՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ

Սան-Սթեփանո

ԵԿԵՂԵՑԱԿՈՆՔ

34. Գէրգէ Էֆ. Ասլանեան

(Ա. Վիճակ)

Սրբազիւղ

- 1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
- 2. Տ. Վահրամ » Մանկունի
- 3. Տ. Զարմայր քհնյ. Կէզիւրեան
- 4.

35. Խաչիկ Էֆէնտի Սըվանեան

36. Տօքթ. Ստեփան Էֆէնտի Թէրզեան

(Բ Վիճակ)

Բերա-Գասը Բ-Փաշա

- 5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
- 6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
- 7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաճեան
- 8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

37. Աստուածատուր Էֆէնտի Է աչատրեան

38. Արամ » Հալանեան

39. Արմենակ » Բալսեղեան

40. Գէորգ » Թորգմանեան

41. Գիգոր » Շահլաբեան

42. Յովհաննէս » Զէօկիւրեան

43. Սարգիս » Մինասեան

44. Տր. Վ. » Թորգոմեան

45. Յտեփան » Գարսեան

(Գ. Վիճակ)

Գարթալ-Գնալը

- 9. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
- 10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
- 11. Անանիա Վ. Հազարապետեան
- 12. Տ. Սիբայէլ քհնյ. Աշնեան

46.

Գուրուբէշմէ

(Դ. Վիճակ)

- 13. Տ. Արիստակէս Ա. Զինյ. Զիզմէնեան
- 14. Տ. Խորէն » Յարութիւնեան
- 15. Տ. Յուսիկ » Բազումի
- 16. Տ. Տանատ » Փաշայեան

47.

Պէշիկժաշ

(Ե. Վիճակ)

- 17. Տ. Եզնիկ Ծ. Վ. Պապաեան
- 18. Տ. Հմայեակ Զաճ. Էքսէրեան
- 19. Տ. Բարձող » Թագումեան
- 20. Տ. Արէլ » Երէցեան

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիգիւղ

ԱՇԽԱՐՀԱԿՈՆՔ

49. Երուարդ Էֆէնտի Գարակէօղեան

50. Հրանտ » Ասատուր

51. Մարկոս » Նամանեան

52. Յակոբ » Պահրի

(Ա. Վիճակ)

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

- 21. Օննիկ Էֆ. Մինասեան

53. Անտոն Էֆէնտի Թալազ

54. Աղաթի » Ալասեան

55. Երուարդ » Շիրինեան

56. Ներոէս » Օհանեան

57. Մկրտիչ » Արզարեան

58. Պեննէ » Թորոսեան

95. Սարգիս » Էսմէրեան

Խասգիւղ

Եէնի-գարու

- 22. Պետրոս Էֆէնտի Հալանեան
- 23. Պետրոս » Խորասանեան
- 24.

60. Պենոն Էֆէնտի Յէյրմէնեան

61. Վահան » Փափազեան

Մագրիգիւղ

- 25. Երուանդ Էֆէնտի Պէյազնեան
- 26. Թագուր » Արեւեան
- 27. Տօքթ. » Մալխասեան
- 28. Յակոբ » Պոյաճեան
- 29. Յովհաննէս » Իսազուլեան
- 30. Սարգիս » Պէրիգիւղեան
- 31.

Պալամ

62. Տօքթ. Կարապետ Էֆէնտի Եղուպեան

63. Յարութիւն Էֆ. Մոստիշեան

64. Սարգիս » Սրբնյ

65. Հրանտ » Անդրէասեան

Սկիւտար Եէնի-մահալլէ

66. Թորգոմ Էֆէնտի Պոյաճեան

67. Հմայեակ » Խոսրովեան

68. Վահան » Սուրենեան

- 32. Արշակ Էֆէնտի Ալայոյանեան
- 33. Յովսէփ » Գազազեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ ԻԳ.

27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913


Ն Ա Խ Ա Գ Ա Հ. — ՍՐԲԱԶԱՆ ՊՍՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ

Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ. — ՏՐ. ՏԱՂ ԼԻԱՐԱՆ ԷՖԷՆՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. — ընտրութիւն Ազգ. ժողովոյ ներկայացուցչի յերուսաղէմ:
2. — Ազգ. տուրքի կանոնագիրը եւ Համադակալութեան ու Նախաձեռնութեան Դիւաններու տեղեկագիրները:
3. — Քննութիւն ծրագրի կանոնագրի Ս. Յակոբեանց վանուց. Երուսաղէմի (Շարունակութիւն վիճարանութեան):

(Նիստը տեղի ունեցաւ Գալաթիոյ խորհրդանշը իր նամակը կարողանք իր նամակը Վսեմաչուք Ատենապետ Էֆէնտի Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Բացակայութիւն Երեսփոխանաց ՏԵՆԱՊԵՏ. ԷՓ. — Ներսէս Էֆ. Օհանեան անձնական տկարութեան պատճառով չի պիտի կարենամ այսօրուան նիստին ներկայ գրտեան անձնական տկարութեան պատճառով նուիր, կը խնդրեմ որ Պատկ. Ժողովը այսօր չպիտի կրնայ ներկայ գտնուիլ կը օրինակօր բացակայ նկատէ զիս:



Միւս կողմէ Ա.զգ. Երեսփոխան ըլլալու հանգամանքս զիս կը դրդէ պարտականութիւնս կատարել երկտողով մը, ներկայացնելով իմ կարծիքս որ պիտի ըսէի անձամբ Պատ. Ժողովին առջեւ թէ որ բանաւոր փրգելը չ'ունենայի:

Պատ. ընկերակիցքս լաւ գիտեն թէ Երուսաղէմ ի՞նչ քառասյին վիճակ մը առած էր եւ աւելի գէշ ըլլալու ալ հակամէտ, երբ Ընդհ. Ժողովը միաձայնութեամբ որոշեց Երուսաղէմը ազատել իր ունեցած անկ վիճակէն:

Նոյն ժամանակ իր մէջէն ընարեց 15 երեսփոխաններ իւրաքանչիւր խմբակցութիւններէ որ կոչուեցաւ խմբակցութեան Ժողով, որուն մէկ անգամը ըլլալու պատիւն ունիմ. այդ մարմինը կարողացաւ օրէնք մը շինել, որ բաւական զօրութեամբ թիւններէ և վիճարանութիւններէ վերջ վաւերացուեցաւ Ընդհ. Ժողովէր, իրաւի շատ մը անձինք իրերը իր վիճակին մէջ ձգելու աշխատեցան որ վաւերացումը վեժեցնեն, բայց ազգային Ժողովի ուժեղ միտքը ու կամքը կարողացաւ զանոնք չեզոքացնել և անգործութեան դատապարտել:

Բայց ի՞նչ զարմանալի բան պատահեցաւ որ երէկուան այդ ջանքախուճ մարմինները, հոգի առնելով կրնան կոր ախրապետել Ժողովին վրայ անգործութեան դատապարտելու համար Օրէնքը՝ գործադրութեան սկսելու ժամանակ: Սա կուզեմ յիշեցնել իմ ընկերներուս թէ, ներկայացուցի Օրէնքը արդէն նոր չէ, 1866ին առաջին անգամ Ազգ. Ժողովէն խմբագրուած Օրէնքին մէջ գոյութիւն ունէր, այդ շրջանին կրօնական աւելի տաք գագացումներ, ինչպէս նաեւ աւելի պատկառելի եկեղեցականներու ներկայութեան առանց արգելքի ընդունուած է: Արդեօք 50 արի վիտըր աւելի ես կ'երթանք, քի առաջ:

Արդ վերջացնելով երկտողս կը խնդրեմ իմ պատուարժան ընկերակիցներէս որ բարեհաճին այսօր իսկ ընարել Օրէնքին արամադրած «ներկայացուցիչը» աւելցնելով թէ խմբակցութիւնը ո՛ր եւ է թեկնա-

ծու մը չունի, բաւական է որ Ժողովը իր ներկայացուցիչը ընարէ, ապա թէ ոչ յետ այսու չե՛նք կրնար ըսել թէ երեսփոխանական Ժողով ունինք, որովհետեւ մեր ներկայացուցիչը չ'ընտրած ժամանակնիս զիտցած ըլլանք թէ Ազգ. Երեսփոխանական Ժողովին յուղարկաւորութիւնը կատարած կ'ըլլանք, որ կը մնայ պատմական:

Յարգանք

ՆԵՐՍԷՍ ՕՀԱՆԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ. Է.Յ. — Խօճասարեան էֆ. զիր մը զրկած ըլլալով պիտի կարդանք

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Երուսաղէմի վանքին նոր կանոնադրի համաձայն Ազգ. Ժողովի ներկայացուցչին ընտրութեան առթիւ թեկնածութենէ հրաժարած էի որոշ սկզբունքի մը համաձայն: Նոյն մերժումս կրկնեցի Ամեն. Ս. Պատրիարք Հօր, երբ թեկնածութեանս հաւանութիւնը կ'ուզէր, նոյնը նաեւ անվերապահ յայտնած եմ բազմաթիւ Երեսփոխաններու:

Հակառակ ասոր, Ազգ. Ժողովոյ վերջին նիստին երեսփոխաններէն ոմանք իրենց քուէներովը պատուած էին զիս, որով անունս անցած է համեմատականի ցանկին մէջ:

Այդ վստահութեան համար շնորհակալութիւնս յայտնելով հանդերձ, ինձի համար սկզբունքը միշտ նոյնը կը մնայ, եւ կուզամ անգամ մը եւս բացորոշ յայտարարելու թէ՛ երբէք թեկնածու չեմ նոյն պաշտօնին, եւ կը խնդրեմ որ իմ մասին քուէարկութիւնը չեղեալ նկատէք:

27 Դեկտ. 1913 Ազգ. Երեսփոխան

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

ԱՏԵՆ. Է.Յ. — Օրակարգի միջոցին նըկատի կ'առնուի այս գիրը:

ՏԵՂԵԿ. ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻՆ

ԱՏԵՆ. Է.Յ. — Համարակալութեան զիւանը զրկած է 1914ի պիւտճէի մասին իր տեղեկագիրը, որ պիտի կարդացուի:

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ

Պատկ. Ժողովը իր 28 հոկտեմբեր թըւակիր եւ 1911 համար պաշտօնագրով դիւանիս ընտրութեան յանձնած էր 1913 տարւոյ Պատրիարքարանի երկտացոյցը յարակից վաւերաթուղթերով Դիւանս քընուութեան առնելով այդ ծրարը ներկայիս կը փութայ պատճառարանեալ տեղեկագրով մը իր հետեւեալ եզրակացութիւնները կը թարկել Պատկ. Ժողովիդ վաւերացման:

Ա. ի մասին 1912 արեւոյտի Կեդր. Սցնուկի Հաւիւնեութեան մասնակաւորութեան

Յարակից տեղեկագրով ներկայացուած դիտողութիւնները ուշադրութեան առնելէ ետք եթէ Պատկ. Ժողովը յարմար դատէ, կառաջարկենք վաւերացնել վերոյիշեալ շրջանին ելեւմուտքը:

Բ. ի մասին 1913 արւոյ հաւուկիւնի եւ հաւուկիակի

Պատկ. Ժողովէդ վաւերացուած մասնաւոր օրինագծով մը կառաջարկենք միանգամ ընդ միշտ երկտացոյցին գոյքին մէջէն վերցնել հետեւեալները:

Table with 2 columns: Item name and Amount. Items include 'Մուգաթայի տուրքէ պահանջ', 'Քանչիչէքի', 'Պետական նպաստէ', 'Երուս. վանքէ պատիր. ծախք', 'Աշրգեանի կտակէ'.

Եւ ասոնք անցնել անգանձելիներու ցուցակին մէջ. ինչպէս նաեւ Պարտուց կողմէն ջնջել 152620 զրչ. ի գումարը որ լուծուած Բարեգործական Ընկերութեան գոյքերու արժէքն է, քանի որ այդ խնդիրը այլեւս փակուած կրնայ նկատուիլ:

Գ. ի մասին 1913 արւոյ համար սովորական Ելեւմուտցի վարչ. ներկայացուցած ծրագրին

Նկատելով որ 1913 տարին լրացած է և

պիւտճէի նախատեսութիւնները այլեւս աւելորդ դարձած, բոլորովին անօգուտ կը համարինք քննել 1913 տարւոյ երկտացոյցը: Լաւագոյն միջոցն է յանձնարարել որ 1913 տարւոյ հաշուեփակը անմիջապէս փութացուի ներկայացնել քննութեան և վաւերացման: Սակայն, այս մասին հարկ կը դատենք թէ այս հաշուեփակի պատրաստութեան եղանակի մասին և թէ յառաջիկայ 1914 տարւոյ պիւտճէի նախատեսութեանց պատրաստութեանց վերաբերմամբ ի ստորեւ պարզուած թելադրութիւնները նկատողութեան առնել և այս առթիւ Ընդհ. Մատակարարութեան հաշիւներն ալ ներկայել վաւերացուելու համար:

Դ. ի մասին 1913 արւոյ արտատուոր Ելմացոյցի ծրագրին

Արտատուոր պիւտճէի դրութիւնը թէ անտեղի և թէ անպատեհ է պէտք է ամբողջ հաշիւները իմի խտացնել և այնպէս ներկայացնել. և այս դրութիւնը մի անգամ ընդ միշտ իւրացնելով յառաջիկայ տարիներուն համար ալ կիրարկել եւ մասնաւոր նկատի առնել թէ Պատրիարքարանը հաւաքական սնտուկ մը ունի, ուր ամէն գործառնութիւններն ալ ի մի պէտք է հաւաքել:

Կ'առաջարկենք սոյն հաշուեփակին մէջ խտացնել նաեւ նորակառուց Պատրիարքարանի շինութեան հաշիւներն. այս առթիւ Բերայի գերեզմանատան եւ այլ հաշիւներէ առնուած գրամներն ալ յիշատակելով:

Կրթական նպատակներու համար յատկացուած կտակներու հասոյթներն եւ ասոնց հանդէպ սահմանուած ծախքերը, ինչպէս նաեւ մասնաւորաբար բարեյիշատակ Եօանէսքուի գոյից ելեւմուտքն ալ մասնաւորապէս ու ճշգրիտ պատկերացնող յարակից երկտացոյց մը պահանջել:

Ե. Ի մասին Ելմասկան օրինագիծի եւ Սակացոյցի

Սակացոյցը իբր զուտ օրինագիծ մը, ինչպէս նաեւ ելմասկան օրինագիծը յետ լուրջ ըննութեան, բերել Ազգ. Ժողովի ըննութեան ու վաւերացման համար:

Մուգաթայի եւ Քանչէլէրի տուրքերուն կանոնաւոր գանձման եւ օրինաւորման համար պատրաստել նոր ու արդար բախման ցուցակ մը, եւ այդ ցուցակին անթերի գործադրութեան միջոցները խորհրդի:

Զ. Ի մասին 1914 տարւոյ համար պատրաստելիք Ելմասցոյցի ծրագրին

Յառաջիկայ 1914 տարւոյ պիւտձէի պատրաստութեան համար իբր հիմ ունենալ հետեւեալ անտեղիտալի օրէնքները, այն է հաւանականութիւն, տարեկանութիւն, գործադրելիութիւն, միակերպութիւն եւ մանաւանդ ընդհանրականութիւն: Այս պատճառով պէտք է չափազանց յոյս դնել Ազգ. Տուրքին յաւելման հաւանականութեան վրայ, նոր օրինագիծի գործադրութիւնը հաւանական է որ հասոյթի բարձրացում մը տայ, բայց միւս կողմէ, նկատելով որ, ուրիշ հասոյթներ ալ զանազան պատճառներով նուազելու հակամէտ են, ենթադրական յաւելումի մը համար սխալ կըլլայ, արտասովոր ծախքերու ենթարկուիլ, եւ արդէն գտնուած բացը ահագին պարտքի մը փոխարկել: Մեր ծախքերը իրական են եւ մնայուն իսկ հասոյթները կամաւոր եւ անկայուն: Ազգային Տուրքը որ կը կազմէ եւ պիտի կազմէ Ազգային Պատրիարքարանի մեծագոյն հասոյթը, իրապէս տուրք է, բռնին օրինական իմաստով, հապա միայն նուէր մը, որով Պատրիարքարանը այդ տուրքը գանձման մասին անձանձորոյթ եւ համբերատար գանձումէ եւ կանոնաւոր հակակշիռէ զատ ուրիշ զէնք չունի:

Կ'առաջարկենք Ազգ. տուրքի նոր օրինագիծը անմիջական կերպով վաւերացնել եւ գործադրութեան դնել անյապաղ յառաջիկայ տարուան հասոյթները այժմէն ապահովելու համար:

Պաշտօնէից յաւելման եւ թոշակներու բարձրացման խնդիրները բացարձակապէս յետաձգել - ի բաց առեալ փոքր թոշակ ստացող պաշտօնէից յաւելումները որոնք արդէն քուէարկուեցան - մինչեւ վերջնական ընդունելութիւնը վերակազմութեան ծրագրին, որոց տրամադրութիւններէն պէտք է կախում ունենան այդ որոշումները:

Դժբաղդարար, մեր Պատրիարքարանի պիւտձէն խիստ յաճախ բացով փակուած է, նոյն իսկ այդ բացը այժմ ալ դոյութիւն ունի, որով եթէ ենթադրեալ հասոյթի առաւելութիւններն իրականանան, նախ եւ առաջ այդ բացը պիտի գոցեն, որով միշտ ինկատի ունենալու է հակակշիռելու պէտքը, եւ ըստ այնմ ծախքերը սահմանափակելու, մինչեւ որ վերակազմութեան առթիւ ըլլալիք պատահական ծախքերու բարձրացման ի փոխարինութիւն նոր հասոյթներու ապահով աղբիւրներ ներկայացուին:

Խորին յարգանք
Համարակալութեան Դիւանի
Անդամ Անդամ Ատենապետ
Խ. Սվանեան Լ. Տնտեսեան Ե. Երիցեան

ՊԱՍՏՃԱՌԲԱՆԵԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատկ. Ժողովը իր 1916 համար եւ Հոկտ. 28 թուակիր պաշտօնագրով հաճած էր Դիւանիս նախաճննութեան յանձնել Քաղ. Ժողովին կողմէ մատուցեալ Ազգ. Պատրիարքարանի 1913 տարւոյ ելմասցոյցը յարակից շատ մը հաշուեցուցակներով: Պատկ. Ժողովի յանձնարարութեան համեմատ զանոնք մանրակրիտ քննութեան մը ենթարկելու մեր կարգին ներկայ տեղեկագրի իբր բացատրագիր ձեր նկատածման ներկայացնելու պատիւն ունինք:

Պատկ. Ժողովից ուղարկութիւնը ուրիշ ոչ նուազ զարմանալի կէտի մը վրայ ալ պարտաւոր ենք հրաւիրելու:

- Վերոյիշեալ ծրագրը կը պարունակէր
- Ա. 1912 տարւոյ ելքն ու մուտքը ցուցընող ընդհանուր մատակարարութեան հաշուեփակը
- Բ. 1912 տարւոյ վերջնական հաշուեկշիռը,
- Գ. 1913 « կրկին ելմասցոյցները,
- Դ. 1913 « համար արտասովոր պիւտձէ մը:

Ինչպէս նաեւ ասոնց վերաբերեալ երկու հատ ալ պատճառաբանեալ տեղեկագիրներ արոց սակացոյց մը և օրինագիծ մը:

Ա. ԿԵԴՐ. ՄՆՏՈՒԿԻ ԵԼՔԻՆ ՈՒ ՄՈՒՏՔԸ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՍՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒՅՓԱԿԸ

Դիւանս թէեւ Սահմանադրութեան 61րդ յօդուածին տրամադրութեան համաձայն կեդր. Մնտուկի 1913 շրջանի հաշուեփակը ըննութեան ենթարկելու պատրաստ էր, սակայն, այն համոզումով թէ Սահմանադրութեամբ հաստատուած Ելմասցոյցի Հոգաբարձութիւնը իբր մատակարար կեդր. Մնտուկին, ու Տնտեսական Խորհուրդը իբր հսկող 1912 տարւոյ ընդհանուր գործառնութիւնները օրը օրին ճշտած հասոյթները ստուգած եւ ընդհանուր գործառնութիւնները հակակշիռած են, ներկայացուած հաշուեցանկերով եւ անոր մէջ նշանակուած թիւերու ուսումնասիրութեամբ գոհացաւ միայն Նախ ներուի մեղ ըսելու թէ 1912 տարւոյ գոցուած հաշիւներու մէջ, անտեղութիւն մը կը տեսնենք զոր անցողաբար վեր հանել կը փութանք:

Փակեալ տարւոյ - année antépénultième - հաշիւներուն մէջ, երկու հասոյթից գլուխներուն - Մուգաթայ եւ Քանչէլէր - նախատեսութիւնները նշանակուած են փոխանակ իրականացած մտից գումարներուն, որով մէկ կանարկով կացութիւնը հասկնալ ուզող ընթացող մը սխալ տրամադրութեան տակ պիտի գտնուէր, եթէ ստորեւ զրուած կշիռն ալ նկատողութեան չառնելով անցնէր:

Այս հաշուով կը տեսնենք որ մինչդեռ 1914 տարւոյ մէջ կեդր. Մնտուկի հասոյթներէն մուտքը 651149 3/4 զրշ. ի եւ ելքն ալ 595797 1/4 զրշ. ի որուն 580985 3/4 զրշ. ը սովորական եւ 14801 1/4 զրշ. ալ կաթողիկոսական բացառիկ ծախուց - բարձրացած են 70154 3/4 զրշ. իրական առաւելութիւն մը ձգելով:

1912 տարուան շրջանին զուտ մուտքը 604912 1/4 իսկ ելքը 631164 զրշ. եղած է. հոս հարկ է նաեւ դիտել տալ որ 1912 տարւոյ նախահաշիւով «Գաւառական Հովութիւն» գլխուն համար հաստատուած 45000 զրշ. վարկը բնաւ չէ գործածուած որով բազրատմամբ 1911 եւ 1912 տարեւոր շրջանին մէջ կ'ունենանք հասոյթից նուազում զրշ. 46237 1/2 ծախուց առաւելութիւն « 35366 3/4 Ընդ ամէնը 81604 1/4

մէկ տարիէն միւսը, կարեւոր տարբերութիւն մը, որուն մասին լռութեամբ չենք կրնար անցնիլ:

Պատկ. Ժողովից ուղարկութիւնը ուրիշ ոչ նուազ զարմանալի կէտի մը վրայ ալ պարտաւոր ենք հրաւիրելու:

Կեդր. Մնտուկի 1912 տարւոյ հաշիւներուն մէջ նորակառոյց Պատրիարքարանի շինութեան համար նոյն շրջանի մէջ ո'չ եղած ծախքերը եւ ո'չ ալ ուրիշ ծախքերը:

քերուէն յատկացուելու նպատակաւ Բերայի գերեզմանատան դրամէն առնուած 3000 ոսկւոյ -2500 շինութեան 500 կահաւորման- կարեւոր գումարը նշանակուած է, որով ներկայացուած հաշիւը թերի է, եւ Պատկ. Ժողովիդ կը մնայ հրաւիրել վարչութիւնը որ ամբողջացնէ հաշուետուութեան այս մասն ալ, որուն ելքը այսօր մօտաւորապէս 710000 զրշ. ի կը հասնի:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ ՀԱՇՈՒԵԿԻՈՒԸ

1912 տարւոյ Դեկտ. 31 լրացող շրջանի հաշուեկշիռը եթէ ուշի ուշով քննենք, եւ անկէ զեղչենք անգանձելի պահանջները որոնք տարուէ տարի փոխադրելու հաճոյքին համար իբր զարդ տուածարներուն մէջ կը պահուին եւ որոնց մասին աւելի վարը դարձեալ պիտի խօսինք կը տեսնենք որ, մինչդեռ 1911 տարեշրջանին մէջ կեդր. Մնտուկի իրական գոյից գումարը մօտաւորապէս 236800 զրշ. ի իսկ վճարելի պարտքն ալ 363000 զրշ. ի կը հասնէր 126800 զրշ. ի պարտուց առաւելութիւն մը թողլով, 1912ի վերջը ընդ հակառակը կը դիտուի որ իրական գոյքը մօտաւորապէս կը հասնի 494300 զրշ. ի իսկ վճարելի պարտքը 662000 զրշ. ի եւ բացը 167700 զրշ. ի, որով այս շրջանին մէջ սնտուկին յանձնուած կամ Պատրիարքարան հասած աւանդներէն կլորիկ հաշուով 40000 զրշ. ի չափ խորուած է, ինչպէս որ վերը ըսինք հաշուեկշիռին գոյից մէջ կան խել մը պահանջներ որոնք անգանձելի են, ասոնք են:

Մուգաթայի տուրքէն Առաջնորդներուն պարտքը	471976
Քանչեղէրի տուրքէն Պոլսոյ թաղերու պարտքը	100092
Պետական նպաստի հաշուէն պակաս գանձուած	3200

Երուսաղէմի Վանքէն պատգաւորներու ծախուց վճարուած	32719
Աշըգեանի կտակին համար եղած պետական ծախքերէն	13841

Արդ երկու առաջինները տարիներ առաջ վարչութեան կողմէ կատարուած բաշխման հիման վրայ ամէն տարւոյ սկիզբը զանազան Առաջնորդական թեմերու եւ մայրաքաղաքիս մէջ թաղերու պարտուց անցուցած տարեվճարներու եւ ասոնց անվճար մնացած գումարներու կուտակումէն առաջ եկած են:

Ասոնք, ինչպէս նաեւ վերջին երեք պահանջները անգանձելի կը նկատենք, եւ ինչպէս որ ասկէ առաջ քանիցս առաջարկուեցաւ, այս անգամ ալ կը խնդրենք որ Պատկ. Ժողովդ հաճի տալ պէտք եղած արտօնութիւնը Տնտես. Խորհրդոյ եւ յանձնարարել Վարչութեան որ

Ա. Բոլորովին ջնջէ պետական նպաստի մնացորդը

Երուսաղէմի վանքէն մնացած պահանջը Աշըգեանի կտակին համար եղած ծախքը

Բ. Մուգաթայի եւ Քանչեղէրի պահանջներէն հաշուակցութեամբ գանձուելիք մասերուն արձանագրութիւնները կատարելով եւ միմիայն 1913 տարւոյ հասոյթներէն վճարող թեմերու եւ թաղ. Խորհուրդներու բաժինն փոխադրելով, մնացած մասերը որ մօտաւորապէս գոյից ցուցակէն 540000 կը հաշուենք, բոլորովին ջնջել:

Գ. Վերջապէս թէ Մուգաթայի եւ Քանչեղէրի նոր եւ արդի բաշխում մը կատարելով անոնց անպայման գանձման համար հարկ եղած միջոցները ձեռք առնել: Կեդր. Մնտուկի պարտուց կողմն ալ կայ կարեւոր գումար մը 152620 զրշ. ի չափ որ լուծեալ ընկերութեան մը գոյքը ըլլալով Պատրիարքարանի անցած է, այս

գումարն ալ հաշիւներէն ջնջելու պարագային նկատողութեան արժեք հարկ է:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ ԵՎ ՄՏԱՑՈՅՑԸ

— Որոնց մին Տնտեսական եւ միւսն Քաղք. Ժողովը պատրաստած է—

Այս երկու ելմտացոյցները բոլորովին աւելորդ կը դատենք քննել, նկատելով որ արդէն տարին լրացած է եւ հասոյթները ու ծախքերը իրականացած են, լաւագոյն է 1913 տարւոյ հաշուեփակն ալ գալիք Յունվար 1ին լրացնել եւ զայն քննելէ յետոյ վաւերացնել իբր կատարուած իրողութիւն:

Այս առթիւ կը փութանք մէկ քանի դիտողութիւններ ընել սոյն պիւտձէի պատրաստութեան եղանակին մասին:

Օրինաւոր պիւտձէի մէջ փնտուած տարրական հանգամանքներու մասին աւելորդ չենք սեպեր մի քանի լուսաբանութիւններ տալ որքան ալ որ անոնք ծանօթ ըլլան Պատկ. Ժողովիդ. այսպէս օրինաւոր պիւտձէ մը պէտք է ունենայ հաւանականութիւն, գործադրելիութիւն, միակերպութիւն, արդ. ասոնցմէ բոլորովին զուրկ է Պատկ. Ժողովիդ վաւերացման ենթարկուած պիւտձէն, նախ ասոր գործադրութեամբ յառաջ գալիք բացին կամ անբաւականութեան վիճակը ստոյթից աղբիւրներէն մէկ քանիին տալիք արդիւնքը հաւանականութենէն շատ աւելի ցոյց տուեր է, օրինակի համար Ազգ. տուրքը որ մինչեւ հիմա 130000 զրշ. ը չէ անցած 0/0 38 1/2ի հազարն յաւելմամբ 180000 զրշ. ի նախատեսուած է: Արդ, ներկայ տարւոյ առաջին վեցամսեային ազգային տուրքէն միայն 68011 զրշ. գոյացած է: Եւ երբ նկատողութեան արժեքի որ ազգային տրոց դիւրագանձելի մասը Յունվարի սկիզբէն մինչեւ Ապրիլի վերջը ամբողջապէս կը հաւաքուի, տարակոյս չմտար այլ եւս որ, հակառակ կեդր. Մնտուկին մատակարարութեան հետապնդմանց, հազիւ հազ 14051 150000 զրշ. ի հասոյթ մը պիտի կրնայ տալ:

Քաղ. Ժողովը ազգային տրոց նոր կանոնադրին գործադրութեան դրուելուն վերայ կը հիմնէ իր այս նախատեսութիւնը, սակայն, մենք չենք յուսար որ խոհեմ գործ մ'ըլլայ չփորձուած եւ չստուգուած հասոյթի մը կոթնելով ահագին ծախքերու դուռ բանայ, չի մոռնանք նաեւ որ եթէ նախատեսուած առաւելութիւններն ալ մասամբ ձեռք բերուի, ասիկա բացը թեթեւցնելու միայն պիտի ծառայէ:

Արդ, մեր նախատեսութեանց համեմատ 1913 տարւոյ հասոյթից գումարը 540000 զրշ. ը չպիտի անցնի, մինչդեռ 626900 զրշ. նշանակուած է ելմտացոյցին մէջ:

Գալով ծախուց ընդհանուր թոշակներու գլուխը որ ելից 0/0 73 1/4ը կը ներկայացնէ, Քաղ. Ժողովոյ նախահաշւոյն մէջ երկու մասի բաժնուած է, տարւոյն առաջին վեցամսեային համար 195000 զրշ. իսկ երկրորդին համար 306000 զրշ. յատկացուած է, ինչպէս նաեւ հանգստեան թուղթերու որուն 14400 եւ 13800 սահմանուած է, այս երկուքին վրայ 53200 զրշ. ի յաւելում մը նշանակելով, որով ընդունուած վարկերուն համագումարը կը հասնի 684650 զրշ. ի ըստ մեր կարծեաց մօտաւորապէս 140000 զրշ. ի հաւանական բացով:

Եւ սակայն, ելմտագէտները այս մասին խիստ պարզ եւ տարրական կանոն մը սահմանած են, զոր Վարչութիւնը կրնար կիրարկել ներկայ պարագային, փոխանակ պիւտձէին մէջ կանխաւ նոր ծախքեր աւելցնելու, իր ելմտացոյցը Պատրիարքարանին ներկայ կազմին վրայ պատրաստելու

էր, եւ վերակազմութեան ծրագրին քուէ-
արկութենէն վերջ միայն հոն ներմուծ-
ուած փոփոխութեանց համեմատ, եւ անոր
վրայ ձեւած պատճառաբանեալ տեղեկա-
գրով մը յաւելուածական կամ լրացուցիչ
եւ կամ նորագոյն վարկեր պահանջելու
էր, ահա այս է գիտական եւ օրինաւոր
միջոցը արդէն կէտ մը կայ զոր միանգամ
ընդ միշտ հոս վեր հանել կուզենք,
եթէ չենք սխալիւր Պատկ. Ժողովը վե-
րակազմութեան անուան տակ Պատրիար-
քարանի մաքրագործումը կանոնաւորու-
թիւնը եւ կարգապահութիւնը կրմբոնէ ու
կը պահանջէ, եւ ոչ թէ նոր սնոր պաշտօն-
ներու եւ պաշտօնէից թոշակի յաւելում.
դիւանս կը բողոքէ առնուած այս սխալ
քայլին դէմ, այս վաճառքին նիւթը չէ
որ աւելցնելու է; այլ տեսակը պէտք է
ազնուացնել, բարոյական մակարդը բարձ-
րացնել, կը տեսնուի ուրեմն. որ մեր առ-
ջեւ բերուած պիւտճէն, որ իսկ ան-
գործադրելի է, վասն զի եւ պահան-
ջուած օրինաւորութիւնը, պէս նաեւ
անոր պէտք եղած անհրաժեշտ հանգա-
մանքը:

Հոս անցողակի մատնանշենք ուրիշ
կէտ մ'ալ. նախորդ պիւտճէներու մէջ շափ
իրաւացի կերպով Ազգային Ժողովոյ ծա-
խուց համար զատ եւ բոլորովին անջատ
գլուխ մը բացուած էր, որուն յատկաց-
ուած վարկը Ժողովոյ Ելեւմտից գիւանի
տրամադրութեան ներքեւ կը գրուէր. սա-
կայն, այս անգամ վարչութիւնը չենք
գիտէր ինչ միտքով այս գլուխը բոլորովին
չնջած եւ հանած է իր ելմտացոյցէն եւ
Պատկ. Ժողովի քարտուղարն ալ Պատրի-
արքարանի պաշտօնէից ցանկին մէջ անց-
նելով վարչութեան ենթարկած է. Պատկ.
Ժողովի կը մնայ արտայայտուիլ այս մա-
սին:

Պատկառելի Ժողովը քանիցս արտա-
յայտուեցաւ ելմտացոյցերու մասին, որոնց

ընդհանրականութիւնը պահանջեց. ժամա-
նակ է որ ասկէ վերջ հոս բերուելիք
պիւտճէները ներկայացնեն մայրաքաղաքիս
բոլոր ազգային բարենպատակ հաստատու-
թեանց ելմտական գործառնութիւնները
յարակից պիւտճէներով կամ մասնակի մի-
ացմամբ եւ կամ ձուլմամբ ինչպէս որ
տեղի կուենայ ամէն տեղ:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ԵԼՄՏԱՅՈՅՑ

Եթէ կար բան մը որ չկրցինք հասկը-
նալ, ան ալ արտասովոր պիւտճէ մը ու-
նենալու պերճանքն է:

Արդարեւ, արտասովոր պիւտճէի մը
ծախքերուն արտասովոր հասոյթներ յատ-
կացնել հարկ է, եւ որովհետեւ հաւուրից
աղբիւրը ըլլայ սովորական կամ արտա-
սովոր միշտ ժողովրդական գրպանն է,
եւ եւմտեքի մէջ միօրինակութիւնն ու
ընդհանրականութիւնը ապահովելու համար
միակ գործնական միջոցը մէկ պիւտճէ մը
ուեննալն է:

Արդէն ներկայացուած արտասովոր ել-
մտացոյցին մէջ կը տեսնենք կրթական
նպատակի յատկացուած կտակի մը հա-
սոյթները խառնուած Պատրիարքարանի
չինութեան համար, կատարուած փոխա-
ռութիւններու հետ, գումարներ որոնք ան-
շուշտ առաւել կամ նուազ չափով կեդր.
Սնտուկին մէջ մշած եւ ելած են եւ մա-
տակարարութեան խառնուած. բնական է
որ եթէ փոխառութիւն ընել եւ վճարել եւ
կամ իրենց նպատակէն շեղած դրամները
հատուցանել, կամ ո եւ է կերպով կար-
գադրել հարկ ըլլայ, հաւաքականութեան
միակ անտուկը եղող կեդր. Սնտուկը պի-
տի մտնէ ու անկէ պիտի ելլայ, եւ անոր
սովորական հասութից արդիւնքէն պիտի
վճարուի. նոյն իսկ եթէ մեծկակ փո-
խառութիւն մը կնքելու հարկին մէջ
գտնուինք:

Այս պայմաններուն մէջ կարծենք թէ
Պատրիարքարանի արտասովոր պիւտճէի
հեղինակները աւելի օգտակար օրինաւոր
ու բանաւոր աշխատութիւն մ'ըրած պիտի
ըլլային եթէ ճշմարիտ վիճակը մէջ տեղ
դնելով նախ սովորական պիւտճէին մէջ
Պատրիարքարանի մնացած մասին շինու-
թեան, գալօրիֆէրի գետեղման եւ կահա-
ւորման համար պէտք եղած գումարը, այ-
սինքն 183,600 ղշ. եւ ըստ այնմ պիւտճէի
օսցը նոյն չափով մէջտեղ դնէին:

Բ. Պատրիարքարանի շինութեան ընդ-
հանուր հաշիւ հանելով ծախսուած եւ հարկ
եղած գումարը հոն նշանակէին:

Գ. Կրթական կտակներու հասոյթնե-
րը եւ մատակարարութեան անցած գու-
մարները ընդհանուր պատրաստ հաշւոյն
մէջ անցնելով նուիրական բնոյթ ունեցող
եւ սակայն խորուած աւանդներուն գու-
մարին հետ անմիջապէս վճարելու միջոց-
ները պահանջէին:

Դ. Ի նպաստ կրթական հաստատու-
թեանց եղած կտակներու արդէն խորուած
աւանդներու, ինչպէս նաեւ նոյն տարե-
ըրջանին մէջ անոնց հաշւոյն գանձուելիք
հասոյթները միացնելով նոյն բնոյթը ու-
նեցող երջանկայիշատակ Ա. Եօաննէսկուի
գրամագլխին տարեկան արդեանց հետ յա-
րակից կրթական ելմտացոյց մը պատրաս-
տելով բերելու էին Պատկ. Ժողովի:

Արդէն Պատկ. Ժողովը քանիցս վար-
չութենէն պահանջեց Եօաննէսկուի կտա-
կին հաշւոյն գանձուած դրամներն անոնց
հասոյթն ու ծախքը պատկերացնող ելմը-
տացոյց մը, սակայն չենք գիտէր ինչ մրտ-
քով եւ պատճառներով, վարչութիւնը
մինչեւ այսօր կատարած չէ Պատկ. Ժո-
ղովի այս յանձնարարութիւն զոր կրկնել
հարկ է:

Այս մասին մեր խօսքը աւարտելէ ա-
ռաջ զիտուութիւն մ'ալ աւելցնելու հարկը

կը զգանք, վասնզի կեդր. Սնտուկը հե-
տեւելով իր առաջարկութեան, գերեզմա-
նատան դրամէն կեդրոնական վարժարա-
նին յատկացուած գումարին մնացորդ 1120
Օսմ. լիրան ալ մինչեւ հիմա ծախսած է:
Ուրեմն, Սնտուկի արտասովոր յորջոր-
ջուած ելմտացոյցով ալ 357,232 ղշ.ի գումար
պարտք մը կուենայ զոր աւելցնելով իր
հաշուեկշռով ունեցած պարտքի գումարին
վրայ կուեննանք 524,932 ղշ.ի ընդհա-
նուր պարտք մը:

Ե. Պիւտճէի ծրարին մէջ գտանք նաեւ
ելմտական օրինագիծ մը զոր կարելի է
վաւերացնել 1914ի պիւտճէի պատրաս-
տութեան առթիւ:

Իսկ Պատրիարքարանի սակացոյցը հարկ
է մանրազնին վերաքննութեան մը են-
թարկելով պարագայից պահանջման համե-
մատ բարեփոխել եւ Ազգ. Ժողովի դրոշ-
ման համաձայն, օրէնքի կարգ անցնել,
կցելով զայն ազգային տուրքի օրինագիծին:

**Տեղեկաբեր
Ե. ՇԻՐԻՆՅԱՆ**

ԱՏԵՆ. ԷՖ. — Ատենական գործողու-
թիւնները աւարտած է, բայց հիմայ չենք
կրնար զբաղիլ այս տեղեկագրով, պէտք է
որ տպագրուի, քանի որ երբեւ թուանը-
չաններու խնդիր ուսումնասիրելու շատ
կէտեր կան ասոնց մէջ:

Ուրիշ նամակ մըն ալ ունինք, Ե-
րեսփոխան Տիգրան էֆ. Մանուէլեանի
կողմէ: Կարգանք այն ալ որովհետեւ
տուրքի խնդրոյն կը վերաբերի:

(Ատենադպիր էֆ. Կարգաց հետեւեալ
գիրը):

Վսեմաշուք ատենապետ էֆէնտի
Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Այս օրուան օրակարգին մէջ գտնուող
Ազգ. արոց կանոնագրին մասին հետեւեալ
առաջարկները խոնարհաբար կը ներկայա-

ցընեմ Գերագոյն ժողովիդ. եւ կը խնդրեմ ուշադրութեան անել:

1. Յօդ.ի համաձայն ինչպէս Պատ. Բաղաքական ժողովը առաջարկած է 21 տարեկան թեւակրիտող ամէն ազգ. անհատ պարտաւոր ըլլայ տուրք մը վճարել ազգին. այս տարիքը թէ օրինաւոր եւ չափաւոր է եւ թէ բարոյապէս ու նիւթապէս ազգը կ'օգտուի այդ տուրքը ունեցողներէն, որոնք մեծամասնութեամբ գործի եւ վաստակի տէր եղանակով, միեւնոյն ատեն ազգին կողմէ զրկուած պիտի ըլլայ իրենց համար 25 տարեկանը հիմ բըռնել ինչպէս կ'առաջարկէ Համարակալութեան Նախաքննիչ զիւանր:

Յօդ. 4ը փոխել 1900 առաջին տարիներու յատուկ բոլոր ազգային տուրքի պահանջները ջնջուած են ըսելով, այսինքն 1900էն (1900ն ալ մէջը ըլլալով) պարտք ունեցողները պարտաւոր են 1914էն սկսելով անպայման 20/0 վճարել ամէն տարի ընթացիկ տարւոյ տուրքին հետ միասին. որովհետեւ 1908էն սկսեալ առաջուան պարտքերը ջնջելով չեմ յուսար թէ ներկայ օրէնքը անմիջապէս իր օգուտը ունենայ կեդր. Մտուակին. կը վստահացնեմ թէ մինչեւ հիմայ տարին 1200 ոսկիի չափ ազգ. տուրքէն հասոյթ մը կ'ըլլայ, պայմանաւ որ 80 0/0 յետնեալ տարիներու 20 0/0 ընթացիկ. եթէ 1908էն սկսեալ անկէ առջի տարիները ջնջենք, կեդր. Սընտուակին մեծ բաց մը պիտի գոյանայ:

Յօդ. 8ը կ'առաջարկեմ կազմուելիք յանձնաժողովները 5 տարին անգամ մը կազմել եւ պէտք եղած քննութիւնները

կատարել, եւ ասոր համար բացառիկ ծախք մը սահմանել պիտեմք մէջ. չը կարծուի թէ այս դործողութիւնները տարին եւ կամ երկու տարին անգամ մը թաղերը շուտով կրնան կատարուիլ եւ ցուցակները դրկուիլ Պատրիարքարան, ահպին աշխատութեան կարօտ է, յօգուած մը աւելցընել վեցամսեայ վճարումներն ալ ընդունելու մասին:

Ահա առաջարկներս ասոնք ըլլալով կը կը յուսամ թէ ժողովը նկատողութեան կ'առնէ:

Մնամ խորին յարգանքով
Ազգ. Երեսփ. եւ Ելեւ. Հոգ. անդամ
Տիգրան Մանուկեան
6 Դեկտ. 1913 Մաքրի գիւղ

ԱՏԵՆ. ԷՖ.— Այս թելադրութիւնները նկատողութեան կ'առնենք երբ տուրքի կանոնագրին քուէարկութիւնը ըլլայ:

Այս օրուան օրակարգի խնդիրն է Երուսաղէմի ներկայացուցչին ընտրութիւնը. մեծամասնութիւն չունինք. եթէ կ'ուզէք քիչ մը սպասենք 7—8 Երեսփոխան կը պակսի մեծամասնութիւն ունենալու համար, 63 Երեսփոխանի ներկայութիւնը պէտք է, մինչդեռ 55 Երեսփոխաններ ներկայ են: Ամէն պարագայի մէջ ձեր կամքին կը զիմեմ:

(Պահ մը դադար արուելէ յետոյ մեծամասնութիւն գոյացած չըլլալուն համար նիստը փակուեցաւ):

Ատենադպիր
Հ. Արաւեսեան
Ատենապետ
Տր. Տաղաւարեան



(Գ. Վիճակ)

- Գում գարու, Գումգարուի դուրս
- 69. Դաւիթ էֆէնտի Տէր-Մովսէսեան
 - 70. Համբարձում » Պոյանեան
 - 71. Սարգիս » Սուին
 - 72.

Կէտիկ փաշա

- 73. Հմայեակ էֆէնտի Արամեանց
- 74. Յարութիւն » Ճանկիւսեան
- 75. Յակոբ » Աւետիսեան
- 76. Յակոբ » Նշանեան
- 77. Ներսէս » Ջաբարեան

Սամանիա Ս. Գէորգ

- 78. Գրիգոր էֆէնտի Զօհրապ
- 79. Լեւոն » Սառնեան
- 80. Հայկ » Խօնաօրեան
- 81. Պարգև » Փափազեան
- 82. Լեւոն » Սեղբոսեան
- 83. Ռուբէն » Փափազեան
- 84:

(Ե. Վիճակ)

Գուգլուն-Տուկ-Իճատիէ

- 85. Երուանդ էֆէնտի Խորասան
- 86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
- 87. Ռուբէն » Ջարդարեան
- 88. Ոսկան » Մարտիկեան
- 89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թօփ-գարու.

- 90. Գէորգ էֆէնտի Սիմբէշեան
Հալաթիա-Պէյքօզ
- 91. Երուանդ էֆէնտի Օտեան

Նառլը-գարու.

- 92. Նշան էֆէնտի Գալպեան
- 93. Տիգրան » Մանուկեան

Սամանիա Ալթըմէրմէր

- 94. Պետրոս էֆէնտի Գալփաեան

Սկիւտար Ս. Խաչ

- 95. Բարսեղ էֆէնտի Աւետիսեան
- 96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
- 97. Յարութիւն » Շահրիկեան
- 98. Վարդգէս » Սէրէնկիւսեան
- 96. Յակոբ » Մինասեան

- Ռումէլի-Ֆիսար, Պոյանը-գիւղ, Ենի-գիւղ
- 100. Աբրահամ էֆէնտի Տէր Յակոբեան

ԳՍ.ԻՍ.ՈՒՍՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆՔ

(Ա. Վիճակ)

- 101. Վահան էֆէնտի Թէրեան
Եւզուկիա
- 102. Յակոբ էֆէնտի Պօնճուզեան
Խարբերդ
- 103. Յօրթ. Փաշայեան էֆէնտի
Կարին
- 104. Սողոմոն էֆէնտի Տէր-Ազարեան
Կիրին-Մանճըլմէք
- 105. Աբամ էֆէնտի Անգոնան

Մուշ

- 106. Գեղամ էֆէնտի Տէր-Կարապետեան
Զմշկածագ-Զարսանճագ

Տրապիզոն

- 108. Օննիկ էֆէնտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղձամար

- 109. Ա. Վուամեան էֆէնտի
Բալու

- 110. Գամէր էֆէնտի Շիրինեան
Եօզլատ

- 111. Աւետիս էֆէնտի Ճինիլիզեան
Կեսարիա

- 112. Վահան էֆէնտի Էսաեան
Հալէպ-Այնթապ

- 113. Սարգիս էֆէնտի Գնանեան
Նիկոմիդիա

- 114.

Պաղտատ

- 115. Տօրթ. Ներսէս էֆէնտի Թիւլեան
Սղերդ

- 116. Սերովիէ էֆէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

- 117. Ատովմ ի Երեցեան
Արարկիր

- 118. Արթաբէլ էֆէնտի Սարաֆեան
Եղեւսիա

- 119. Սեպուհ պէյ Իւթիւնեան
Զգմիւռնիա

- 120. Լեւոն էֆէնտի Տնտեսեան
Հասըն

- 121. Տէվլէթ էֆէնտի Ճատրեան
Մալանիա

- 1 2.

Պանտրմա-Պալքէսիք

- 123. Տիրան էֆէնտի Երկանեան
Վան

- 124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

- 125.

Ատանա

- 126. Արիստակէս էֆէնտի Գասպարեան
Բաղէշ

- 127. Աղէբաւնդր էֆէնտի Փանոսեան
Կուտինա—Աֆիւն-Գարա-Ֆիսար

- 128. Ջարեհ էֆէնտի Խօրասանեան

- Պրուսա
129. Գասպար էֆենտի Նեմցե
Ռոտոսթօ
130. Միհրդատ էֆենտի Հալկազն
Տիգրանակերտ
131. Տիգրան էֆենտի Նազաշեան
Տիվրիկ
132.
(Ե. Վիհակ)
Ամասիա—Մարզուան
133. Տիգրան էֆենտի Մարտիկեան
Բարերդ
134. Յարուծիւն էֆենտի Դարբինեան

- Գանձատիա
135. Տր. Խաչիկ էֆենտի Պողոսեան
Գոնեա
136. Բարթող էֆենտի Ջօրեան
Երզնկա
137. Գարրիել էֆենտի Նորատունկեան
Մարաշ—Ջէյթուն
138. Սմբատ էֆենտի Բիւրատ
Շապին—Գարահիսար
139. Ժագ էֆենտի Սայապալեան
Անրաստիա
140. Տօրթ. Նազարեթ էֆենտի Տաղաարեան

Ս Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա. Ատենապետ Գարրիել էֆ. Նորատունկեան
Բ. Սր. Տաղաարեան էֆենտի
Գ. Պարգեւ էֆ. Փափազեան

Ա. Ատենադպիր Հմայեակ էֆ. Արամեան
Բ. Երուանդ էֆ. Պէյազճեան
Գ. Աղեքսանդր էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Չ Դ Ի Ի Ա Ն Ք

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Գիմարսեան
Բ. Արամ էֆենտի Հալաճեան
Գ. Արշակ էֆենտի Ալպոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Աստուածատուր էֆենտի Խաչատրեան
Բ. Մարկոս էֆենտի Նաթանեան
Գ. Հրանտ էֆենտի Ասատուր

ԿԱԼՈՒՄԾՈՑ ԴԻԻԱՆ

Ա. Պենոն էֆենտի Տէլիրմէնճեան
Բ. Վահան էֆենտի Էսսեան
Գ. Թորգոմ էֆենտի Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Եղուարդ էֆենտի Շիրինեան
Բ. Խաչիկ էֆենտի Սրվաճեան
Գ. Լեւոն էֆենտի Տնտեսեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յարուծիւն էֆենտի Մոստիճեան
Գ. Բարսեղ էֆենտի Աւետիսեան
Գ. Նշան էֆենտի Գարպճեան

ԻՐԱԻՍՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
Բ. Գարեգին էֆենտի Տէմիրճիպաշեան
Գ.

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան
Բ. Հայկիկ էֆենտի Խօճասարեան
Գ. Յարուծիւն էֆենտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Բարթող էֆենտի Ջօրեան
Բ. Վահան էֆենտի Թէքէեան
Գ. Ռուբէն էֆենտի Ջարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Սեփականութիւն Ազգ. Սնտուկիւն, Ազգ. Ժողովոյ ծախուց յաշկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաթիոյ